

հանդերձ ծնաւդաւք եւ վարդապետաւք եւ ամենայն աղապանաւք, եւ որք յիշեղ յիշեալ լիջիք:

201ա. Կատարեցաւ գրկունքս այս որ է լուծումն Ածխմաստ. եւ հոգեւոր բանիցն Եւագրի մեծ ճգնաւորի եւ Ածախաւս. վարդապետի եւ իմաստուն հոգեւորի, ի թուիս ԶԿէ ի յամսեանս ապրիլի. ԻՆ. ձեռամբ անպիտան գրչի եւ նոր համբակի Եփրեմի. հրամանաւ սնուցաւ Մարտիրոսի կուսակրան եւ ճգնաւոր քահանայի. ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւդաց. եւ որք յետ նորա ժառանգեն եւ աւգտին ի լուսաւոր բանիցս այսոցիկ եւ սրտի մտաւք ինդրեն ի տէ. ողորմութի. եւ թողութի. մեղաց նորին Մարտիրոս քահանային եւ ծնաւդաց իւրոց եւ ինձ անարժան գրչի եւ իմոցն ամենայնի. եւս առաւել իմ երկրորդ ծնաւդին եւ բաղմբարխտ իմ սրտէ սիրեցեալ քեռոյն իմոյ Յովաննէս քահանայի. որ յայսմ ամի չոքաւ յեմ, զոր տացէ տր. Յս. աղաւ/

201բ. ... (թիւք)ն սրբոց տեսնել ինձ զնա միւսանդամ եւ վայելել ի քաղցր տեսոյ եւ ի զթոյ նորա. եւ եւս Յոհաննիս գրչի ձեռնառաւոր ի յայս գործառնութի. զի եւ նմա թողցէ տր. Յս. զմեղանս իւր եւ զծնաւդացն իւրոց եւ ձեղ յիշողացդ եւ յիշեցելոցս առհասարակ ողորմութիւն յԱյ. ամէն ամէն:

363ա. Կատարեցաւ տառ այս ձեռամբ ապրիկար գրչի Եփ... (րեմի, մի բառ) համբակի հրամանաւ ճգնապեղաց հաւր Մարտիրոսի եւ իմ սնուցաւորի, ի վանս Գլաճոր՝ ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի եւ սր. բարունապետիս Եսայիայ. արդ որք աւգտիք ի սմանէ, յիշեալիք զմեզ աղաւթիւք եւ զմերսն ամենայն. եւ եւս զհայրն իմ հոգեւոր զԱռաքեալ կուսակրան քահանայ եւ սպասաւոր բանի որ զաւրինակն շնորհեաց. զի եւ զուրք յիշեալիք ի տնէ. Այ. ամէն: (Տես պատկ. 223): *

*ՄԱՆՈԹՈՒԹԻԻՆ. — Կաշեկազմ $16.8 \times 11\frac{1}{2} \times 6$ սմ., բուրք 16.7×12.2 սմ., բոլորգիր, մի սիւնակով. 13.6×9 սմ.

Բովանդակութիւնը. ա) սկզբից քերի. 1ա–81ա. Մեկն. ք Յայտ. Զ. 5բ համարից սկսած. Մեկն. Յայտնութեան յԱնդրէաս եպիսկոպոսէ Կեսարու: ք) 82ա–130ա. Տեսութի. քննութի. աղաւթից սր. աւետարանչին Յովհաննու ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակոբոյ ի Ներսիսէ աշակերտէ իւր եւ հագեւոր որդեկէ. սկզբ. Գիր քոյոյ պատուականութիւն. միանգամ եւ երկիցս. գ) 131ա–201ա. Եւագրեա Նշանակ յեղեկիէ: Սկզբ. Յորժամ Բասիլոս վախճանեցաւ. դ) 202ա–263ա. Բազմերշանիկ եւ տիեզերաբարդ սր. վարդապետին վարդանայ. Հաւաքումն մեկնութեց. Երգոյ երգոյն ի խնդրոյ լուսաւոր առն Կիրակոս վարդապետի, որոց յիշատակն աւրինութիւն. Սկզբ. Նման է արքայութիւն. Այ. գանձի ծածկելոյ...

ՅԱԻԵԼՈՒԱՄ Բ. 83.

Բ. Գիրք 233.

Աւետարան, մագաղաթ, պատկերազարդ, վաղարչապատի եկեղեցում, այժմ մատենադ. էջմ.–ի:

283ա. Ըստ ընթացից հոլովման լուսապատարն արաւսեկի (s!) որ ժողովէ, բարդէ զժամանակ բոլոր եղանակաց գոյից շնչականաց եւ անշնչից: ԶՀԲ յարեթեանս տումարի, յաշխարհակալութի. մեծ ինքնակալ իմանին Պուսախո կոչեցել, ի թագաւորուն. հայոց Ղեւոնի, նստեալ ի գահն Կիլիկեցոյ. եւ տանն վրաց/

283բ. եւ մեծաց Հայոց թգ. Գաւրդի եւ յաւուրս տէրութե. մեծ իշխանաց իշխանին տանս Սիւնեաց Բուրթելի, ամենարարէպաշտի եւ քաջի եւ միշտ յաղթողի:

Արդ յայսմ ժամանակի եւս նուաստ Եսայի կրսեր բանասիրաց եւ յետին վարժապետաց ցանկացող եղէ Ածարան. եւ աւետարեւ աւետարանական տառիցս, եւս տու գրել զսա ի լրումն փափազանաց իմոց եւ ընձանցի զսա (երկու տողի չափ քերուած) . . . աւութե. իմոյ մեղուցեալ անձինս եւ յիշատակ բարեաց վարդապետին իմոյ Ներսիսի մեծ եւ քաջ ուսուցիչի եւ Ածախաւս. վարժապետի. եւ որք ըստ մարմնւոյ (s!) ծնան զմեզ եւ սնուցին. եւսյլ ա. երախտաւորաց. մանաւանդ աշակերտեալ մանկանցս, զոր ծնաք բանին երկամբք որդեգին (տողի գլխին աւելացրած է «եք», որով «որդեգբերին կը լինի» ի կրթութի. տեսական եւ գործական իմաստից եւս ա. Ածաշուհչ. տառից, բոլոր կենցաղական հոգոց բարեւա. մընալ ասացեալք: Բայց տեղի գրութե. սորա եղեւ ի գաւառիս//

284ա. Սիւնեաց, ի նեզ եւ յանձուկ աւթեմանիս: Իսկ յիշխանութի. վերադրեալ մեծ իշխանաց իշխանին եւ յաղթող սպառապետին Բուրթելին, եւ երկու արեւդակնանման զեղեցկազեղ հարադատ զաւակացն իւրոց Պեղեհայ եւ Իւանէի: Նաեւ ա. գովութի. բարդաւաճեալ ամենաւրհնեալ ամուսնւոյ իւրո վախախին. որք են յարանց եւ ի կանանց աղբ ընտրեալ եւ գովեալ. լի հաւատովք եւ կատարեալք ա. գործովք առաքինութե. ի ձեռն որոց յոլով շինութի. եւ խաղաղութի. գործեցաւ մեզ եւս. եկեղեցեաց Գիր. ըստ որում հայցեմք ի ստեղծողէն բնաւից բարձր եւ հաստատուն առնել զաթոռ իշխանութե. սոցա իրրեւ զաւուրս երկնից ի վերա երկրի, զի կացցեն, մնացեն ընդ արեւու յառաջ քան զլուսին աղբէ մինչեւ յաղբ. զարմաւք եւ զաւակաւք իւրեանց: Որք ի հասարակախնամ բարեաց սոցա ընդ ամենեսեան եւ մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիւ գութս բարեաց գտաք ի սոցանէ որ զաւտարութիւս. մեր ժողովեցին եւ ընկալան զմեզ ոչ իրրեւ զաւտար, այլ իրրեւ յինքեանց հարադատ/

284բ. ծնեալ մանկունս, զմեր ստահակութիւս. ընկալան: Ըստ որում արթունակն ամենահայեաց ի նոսա հայեացի. եւ վարձահատոյցն Գս. հատուցէ նոցա